

**«ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ Արմավիրի մարզի Բաղրամյան
համայնքի Լեռնագոգ բնակավայրի Պ.Սևակի
փողոց 114 հողամասում արևային ֆոտովոլտային
էլեկտրակայանի կառուցման ՇՄԱԳ
հաշվետվություն
(Լրամշակում)**

«ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ -ի տնօրեն



Ռ. Խաչատրյան

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	5
2. Հավելվածներ	5
3. Օգտագործվող հապավումները	6
4. Նախնական գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	6
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	10
6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը	10
7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	11
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը.....	11
9. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը	18
9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	18
9.2. Սելսմիկա և երկրաբանություն.	20
9.3 Կլիմա և օդային ավազան.....	20
9.4. Հողային ռեսուրսներ	25
9.5 Ջրային ռեսուրսներ	26
9.6. Կենսաբազմազություն	28
9.7 Պատմության և մշակութային հուշարձաններ	31
9.8. Հատուկ պահպանվող տարածքներ	33
9.9. Սոցիալ-տնտեսական	33
10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները/շինարարության և շահագործման , փակման փուլեր/.....	38
10.1 Շինարարության փուլ	38
10.1.1 Շինհրապարակ.	38
10.1.2 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.....	40
10.1.3. Լուսավորություն և ջեռուցում.	41
10.1.4. Հողային ռեսուրսներ.	41
10.1.5. Ջրային ռեսուրսներ.	41
10.1.6. Թափոններ.	41
10.1.7. Սոցիալական.	42
10.1.8. Բարեկարգում.	42
10.1.9. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.....	42
10.1.10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	43
10.2 Շահագործման փուլ.	44
10.2.1 Արևային կայան:.....	44
10.2.2. Ենթակայան.....	45
10.2.3. Հողանցում և շանթապաշտպանություն	46
10.2.4. Լուսավորություն և ուժային ցանց.	46

10.2.5. 10 կՎ ՄԳ-ի կառուցում.....	46
10.2.6. 10կՎ օդային գծի կառուցում:.....	47
10.2.7. Տեսահսկման համակարգ.....	48
10.2.8. Օպերատորական շինություն.....	48
10.2.9. Կրակմարիչներ.....	48
10.2.10. Պահեստային շինություն.....	48
10.2.11. Ցանկապատում.....	48
11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն/շինարարության և շահագործման փուլեր/.....	48
11.1 Շինարարության փուլ.....	49
11.1.1 Օդային ավազան.....	49
11.1.2 Հողային ռեսուրսներ.....	50
11.1.3 Ջրային ռեսուրսներ.....	51
11.1.4 Կենսաբազմազանություն.....	52
11.1.5 Թափոններ.....	53
11.1.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	54
11.1.7 Աղմուկ և թրթռում.....	55
11.1.8 Արտակարգ իրավիճակներ.....	56
11.1.9 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.....	56
11.1.10 Սոցիալական.....	57
11.1.11. Լանդշաֆտ և Բարեկարգում.....	58
12.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան).....	58
12.1 Շինարարության փուլ.....	59
12.1.1 Օդային ավազան.....	59
12.1.2. Հողային ռեսուրսներ.....	59
12.1.3 Ջրային ռեսուրսներ.....	60
12.1.4 Կենսաբազմազանություն.....	61
12.1.5.Թափոններ.....	62
12.1.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	63
12.1.7 Աղմուկ և թրթռում.....	63
12.1.8 Արտակարգ իրավիճակներ.....	64
12.1.9 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.....	65
12.1.10 Սոցիալական.....	66
12.1.11 Լանդշաֆտ, բարեկարգում.....	67
13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.....	68
Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.....	71
14. Մոնիթորիզի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր).....	82
15. Հանրային քննարկումներ.....	85

16. Բողոքների ընթացակարգ	85
17. Վթարային իրավիճակներ և հնարավոր դադարեցում, փակում.	85
18. Նախատեսվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.	86
Գրականություն	88

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեոնազոգ բնակավայրի Պ.Սևակի փողոց 114 հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում:
Նախաձեռնող	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Դավթաշեն, Աղաբաբյան փ. 11/6
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեոնազոգ բնակավայրի Պ.Սևակի փողոց 114 հողամաս
Պատվիրատուի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ռազմիկ Խաչատուրյան 099360000 razmik.khachaturyan@gmail.com .
Պատվիրատու	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
Գնահատման հաշվետվության նախագծող	«Նովալ»ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 arm_eia@outlook.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների Պետական գրանցման
Վկայականը, Պետական ռեգիստրը

Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը

Հավելված 3. «ՀԷՑ»-ի տեխնիկական պայմանը

Հավելված 4. Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան:

Հավելված 5. Օդային և մալուխային գծի ուղեգիծը:

Հավելված 6. Նախատեսվող գործունեության տարածքի կոորդինատները, երկաթգծից
ունեցած հեռավորությունը:

Հավելված 7. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի
Եզրակացություն

Հավելված 8. Մթնոլորտային օդի հաշվարկներ

Հավելված 9. Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն,
մասնակիցների ցանկ:

Հավելված 10. Վճարման անդորրագիր

Հավելված 11. Հարավ Կովկասյան երկաթուղուն ուղղված գրությունը

3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատում ՕԳ՝ օդային գիծ
ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր
Վտ՝ Վատտ
ՖՎ՝ ֆոտովոլտային
ՄՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
կՎտ՝ կիլովատտ
ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր
ՄՎտԺ՝ մեգավատտ ժամ

4. Նախնական գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1999թ. և լրամշակված 2022թ.))- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական,

վիճաբանական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)–սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)–Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպարավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի

ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)–Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)–սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)–Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործմանն ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք (Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին) Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

«ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք (Ընդունված է 2007 թվականի նոյեմբերի 28-ին) Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի գործունեության իրավական, կազմակերպական և տնտեսական հարաբերությունները, սահմանում է ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի պետական կարգավորման հիմունքները, ինչպես նաև կարգավորում է երկաթուղային տրանսպորտի գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի փոխհարաբերությունները պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն» N 2343 - Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ.** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ.** ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ.** «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000** Վոլտ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի** «Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի** «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշում:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի էներգետիկայի բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող»: Նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանը զբաղեցնում է 5.0012 հա տարածք:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացումը՝ նախագծային փաստաթղթին համապատասխան, բացահայտել գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված միջոցառումները:

Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցումը իրականացվելու է «ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ -ի կողմից՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի Պ.Սևակի փողոց 114 հողամասում սեփականության իրավունքով պատկանող հողամասում: Տարածքի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների: Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը էներգետիկայի:

Նախատեսվող արևային կայանի նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի 2024թ. հունիսի 26-ի, 204-Ս որոշման համաձայն՝ «ՅՈՒՆԻԲՈ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է 3000 ԿՎտ տեղակայվող հզորությամբ ԼԷ№07 էլեկտրակենտրոնի արտադրության լիցենզիա՝ մինչև 2046թ. հունիսի 27-ը գործողության ժամկետով: «ՅՈՒՆԻԲՈ» ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքը երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման հիմքերը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել.

- Գործունեության իրականացման նախագծային փաստաթուղթը:
- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 03062024-04-0035:
- Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ 2024թ. մայիսի N045:
- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանները NS-35/0144-1-Հ, 04.07 2024թ. :
- Գործունեության իրականացման Լիցենզիան՝ ԼԷ N07:

8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Ենթակա տարածք. Արևային կայանը տեղակայված է լինելու «ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով պատկանող՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի հողամասում 5.0012 հա տարածքի վրա: Տարածքը հարթ է, չկառուցապատված: Կից գտնվում են բնակավայրեր, ճանապարհներ:

«Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են գործունեության ենթակա տարածքի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրություններ, առկա մերկացումների տվյալների տեղազննություն՝ ակնադիտարկման եղանակով, ինչպես նաև հարակից տարածքներում ինժեներա-երկրաբանական հետազոտումների տվյալների համադրում և վերլուծություն:

Նկար1.




Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ արևակայանի, ենթակայանի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների: Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը էներգետիկայի:

Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրվել է, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները:


Գլոբալ հորիզոնական ճառագայթումը Հայաստանի Հանրապետությունում:

Նկար 2



Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի իրադրության քարտեզ-սխեման՝ ըստ WGS կոորդինատային համակարգի

Գծապատկեր 1



Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է մոտակա բնակավայրերից՝ Լեռնագոգ բնակավայրից՝ 147.2մ, Սելավ-Մաստարա գետից՝ 33,5մ հեռավորությունների վրա:

- «Տատիկ» քարե քանդակ Երկրաբանական հուշարձան՝ 11 կմ
- Հանրապետական նշանակության ավտոճանապարհ Հ-17 (1115 մ)
- Միջպետական նշանակության ավտոճանապարհ՝ Մ-9 (2680 մ)
- Տեղական նշանակության ավտոճանապարհ՝ Տ-3-55 (3մ)

Երկաթգիծը նախատեսվող գործունեության ցանկապատից գտնվում է ամենամոտը՝ 8,3մ, ամենահեռը կետից՝ 64,5մ հեռավորության վրա: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երկաթգծից պահպանվել է 50 մ անվտանգության գոտի, որտեղ որևէ գործունեության իրականացում չի նախատեսվում: Օդային զիծը հատելու է երկաթուղին, ինչի համար «ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ դիմել է Հարավ Կովկասյան Երկաթուղի տեխնիկական պայմաններ ստանալու համար: / հավելված 11/

Արևակայանը գտնվում է ծովի մակերևույթից 1020մ բարձրության վրա:

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների՝

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոնից՝ 25 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակարդակից 1020 մ բարձրության վրա: Տեղագնվող տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են: Ուսումնասիրվող տարածքը կազմված է մի շարք միջին չորրորդական լավային հոսքերով, որոնցից մեկը տարածված է նաև տարածքի

մատույցներում: Լավային հոսքերի վրա տարածված են տուֆային նստվածքները: Տուֆերի տարածվածությամբ պայմանավորված՝ սարահարթի հողաբուսական շերտն ունի կիսաանապատային բնութագիր: Մակերևույթային գերակշռող թեքությունները 3°-5° են:

Շրջանի երկրաբանական պայմանները: Ըստ ակնադիտարկման, ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղագնման շրջանի՝ երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային վերին պալեոգենյան գործունեությունն է, որի հետևանքով ձևավորվել է սարահարթը: Հրաբխային համալիրները ներկայացված են տուֆերով և տուֆոլավաներով, որոնք ծածկված են դելյուվիալ-պրոլյուվիալ շերտերով: Դրանք հիմնականում կենտրոնական տիպի չորրորդական առաջացումներ են:

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են խճային գրունտներ և տուֆեր:

Կլիման. ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01-2024թ. «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթին համապատասխան: Կլիման չափավոր ցամաքային է, շոգ ու չորային ամառներով, չափավոր ցուրտ ձմեռներով: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 11,6 °C, բնահողի սառչելու առավելագույն խորությունը՝ 70սմ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա՝ պայմանավորված հրաբխածին կազմավորումներով, ճեղքավորվածությամբ և ծակոտկենությամբ: Ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ, իսկ կուտակումը՝ լավատակ հնահուններում:

Հայցվող տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների՝ գտնվում են 10մ-ից խորը հորզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի տարածքը գտնվում է I (Առաջին) սեյսմիկ գոտում 8-9 բալլ սեյսմիկությամբ: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ 0.3g:

Տարածքի ինժեներա-երկրաբանական կառուցվածքը. ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ, ելնելով շերտերի լիթոլոգիական նկարագրություններից և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկություններից:

- ԻԵՏ N1 (Ինժեներաերկրաբանական էլեմենտ) կամ շերտ N1- խճաքարային գրունտ ավազակավի կավավազային լցոնումով 30-35%: Լցոնումը շագանակագույն է, թույլ խոնավ և պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Շերտի հզորությունը 0.0-0,7մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության IVբ (13) կարգ է՝ համաձայն՝ ՄՆԻՊ IV-5- 82-ի:
- ԻԵՏ N2 (Ինժեներաերկրաբանական էլեմենտ) կամ շերտ 2- Տուֆեր, կարմիրից մինչև վարդագույն երանգի, տեղ-տեղ խճային հատիկակազմությամբ: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Շերտի հզորությունը 0,7-4.0մ է: Գրունտն ըստ շահագործման դժվարության (37V կարգ է՝ համաձայն ՄՆԻՊ IV-5-82-ի) :

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար, որպես հիմնատակ ծառայում է.

- շերտ 1-ը /խճաքարային գրունտ /, որի սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R_0 = 3.0 \text{ կգ/սմ}^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_n = 4000 \text{ տ/մ}^3$
- շերտ 2-ը /տուֆ /, որի սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R_0 = 4.0 \text{ կգ/սմ}^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_n = 8000 \text{ տ/մ}^3$

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 70 սանտիմետր:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են բնության, պատմամշակութային հուշարձաններ, գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են պայմանավորված տարածքում բուսածածկի բացակայությամբ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների փոփոխություններ չեն կատարվելու, նոր ճանապարհներ չեն կառուցվելու:

Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային և ասֆալտապատ ճանապարհով:

Նախատեսվող գործունեության հարակից տարածքով անցնում է երկաթուղի: Համաձայն «ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք 15.1 հոդվածի 9-րդ մասի. «Երկաթուղային գծի յուրաքանչյուր կողմում երկաթուղու պաշտպանական գոտու արտաքին սահմանագծի հեռավորությունը երկաթուղային գծի առանցքից սահմանվում է 50 մետրից ոչ պակաս», ինչը նախագծում պահպանվել է:

Տարածքի նկարները





9. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

9. 1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան հատվածում: Այն Հայաստանի ամենաբարձր բնակեցված մարզն է, բայց տարածքով՝ ամենափոքրը: Մարզը զբաղեցնում է 1231 կմ² տարածք, ՀՀ տարածքի 4.1 %-ը, իր մեջ ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է:

Նկար 3



Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին: Մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային:

Այն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիս-արևմտյան մասը (800-1000մ բացարձակ բարձրությունները)՝ հյուսիս – արևմուտքից հարավ-արևելք ընդհանուր թեքությամբ: Ընդգրկում է Արարատյան զոգավորության հյուսիս-արևմտյան, Արաքսի ձախափնյա մասերը և Արագած լեռնազանգվածի հարավ-արևմտյան նախալեռնային ստորոտները: Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է:

Լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային, ստորին-վերին չորրորդական բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, լճա-ալուվիալ նստվածքները, որոնք ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով, հիմնականում կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ: Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և


բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում 860,6-862,9 մ սահմաններում:

9.2. Սեյսմիկա և երկրաբանություն.

ՀՀ Արմավիրի մարզի գրեթե ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում: Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադինացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի, ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,3g$:

Նկար 4



9.3 Կլիմա և օդային ավազան

Արմավիրի մարզը գտնվում է ծովի մակարդակից 800-1000մ բարձրությունների վրա :

Մարզը գտնվում է տաք կլիմայական գոտում: Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 254մմ: Ամառը շոգ է, բացարձակ առավելագույնը ջերմաստիճանը ամռանը կազմում է 41.5°C: Ձմեռը ցուրտ է նացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -31.4°C: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 60%: Քամու միջին ամսական արագությունը հունվարին կազմում է 0,5մ/վ, հունվարին՝ 1,1 մ/վ, միջին տարեկան արագությունը՝ 0,9մ/վ: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 70 սմ:

Գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01-2024 «Շինարարական

կլիմայաբանություն» Հայաստանի հանրապետության շինարարական նորմեր: Համաձայն նշված փաստաթղթի Արմավիր քաղաքում կլիմայական բնութագրերն են.

Օդի ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1.

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՉՐԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արմավիր	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Միջին ամառային խոնավությունը, %		Միջին ամառային խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
6. Արմավիր		75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	75	60	46	30

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3.

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	ըստ ամիսների											Տարեկան			
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
6. Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254	96	158
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47		

Քամի

Աղյուսակ 4

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնեկությունը, % ըստ ուղղությունների								Անդրդրի կրկնեկությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7. Արմավիր	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	Արլ	1.9	ՀսԱրմ	2.8
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8						
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1.3				
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7						
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1.1				
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6						
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14	72	0.6				
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8						

Աղյուսակ 5


Արևափայլի տևողությունը

ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿԼԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
12. Արմավիր	ժ	71	111	162	177	236	310	328	314	269	186	139	67	2370
	օր	16	10	7	5	1	0.5	1	0.1	1	5	7	17	71

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄԸ ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Օդային ավազան. Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Մթնոլորտ վնասակար

արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները: Մարզում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ ՀԱԷԿ-ը, Զվարթնոց օդանավակայանը, հանքավայրերի շահագործումը, տարեցտարի ավելացող ավտոտրանսպորտը և աղքատությամբ պայմանավորված ամեն տեսակի կոշտ վառելիքի այրումը: Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ համապատասխան դիտացանցերի միջոցով: Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայաններում:

Նկար 6

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Լեռնագոգ բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Օծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

9.4. Հողային ռեսուրսներ

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Նկար 7



Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալված տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալված հողեր՝ ակալահողերը: Տեղ-տեղ երևում են թափիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են

Ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում՝ առաջացնելով հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ, վանադիում և այլն) և ցիանական միացություններով: Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ մետաղաձուլական գործարանները, արդյունաբերական և կենցաղային թափոնները, ժամանակակից գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու առողջության վրա բացասաբար են ազդում նաև պարարտանյութերի բոլոր խմբերը, մասնավորապես քլոր պարունակող և ֆոսֆորական պարարտանյութերը: Ծանր մետաղների կուտակումը հողում կատարվում է ավելի արագ տեմպերով, քան հեռացումն ու չեզոքացումը, որը տևում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն (Հավելված 3):

2022 թվականի հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են իրականացվել են նաև Արմավիրի մարզում: Հողերի աղտոտվածության ցուցանիշները համաձայն՝ «Հիդրոոլեքոնոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ, տարեկան ամփոփ տեղեկագրի:

Աղյուսակ 5

Մարզ/Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
	Գերազանցումը համապատասխան ՄԹԿ-ից, անգամ						
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4

9.5 Ջրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարաձև ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը), որը սկիզբ է առնում Այդր լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Գործում են Ստորին Հրազդանի, Էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ: Հիդրոէլեկտրաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումն իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող

հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերն առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ դիտացանցերի միջոցով:

Նկար 8




Ջրային ռեսուրսների որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն:

2024 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 80 գետային, 5 ջրամբարային: Ջրի որակը գնահատվում է «միջակից» «վատ» է (3-5րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Ըստ 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի՝ Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ»

(5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Նկար 9




2024 թվականի 1-ին եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 3 Որոշված դիտակետում: ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, մանգանի, նիկելի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿները:

Գործունեության տարածքում մակերևութային ջրերը բացակայում են:

9.6. Կենսաբազմազանություն

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

Նկար 10



Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուսները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (*Alismataceae*)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սովորական նետախոտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախոտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղաձաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*), խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջյանի (*Lactuca takhtadzhianii*), խաչաձաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բունգեի (*Allochrysa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera*), օջան Թամամջյանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառաեզ (*Spinacia tetrandra*), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝

Ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արաբաստյան (*Tritium ararabicum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (*Tetradiclis tanella*) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված են 26 տեսակներ:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են ադուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ խնկեղեզ ճահճային (*Acorus calamus* L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային (*Sternbergia colchiciflora* Waldst. et Kit), Ակտինուլեմ խոշաբաժակ (*Actinolema macrolema* Boiss), Երնջակ Վանաստուրի (*Eryngium wanaturii* Woronow), Վարդատերեփուկ Իլյինի (*Amberboa iljiniana* Grossh) և այլն:



Նկար 11. Շտերնբերգիա շնդեղածաղկային Նկար 12. Ակտինուլեմ խոշաբաժակ

Կենդանական աշխարհ. կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խիտունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես ս), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բաղը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճոխկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում

ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphiophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.), Մեղու Դեսպտորիա (*Megachile deseporia* Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (*Rhinolophuseuryales*), վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus*), քաջահավ (*Plagadis falcinellus* Linneaus), փոքր ձկնկուլ (*Phalacrocorax pygmaeus* Linneaus), Ուբադչի ճպուռ (*Gomphus ubadschii* Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա (*Scotodryadusa satunini*), Հայկական բնդեռնիկ (*Glaphyrus calvaster* Zaitzev), Սև անգղ (*Aegipus monachus*), Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*), Տափաստանային մկնաճուռակ (*Glareola nordmanni*), Սատունինի սկոտոդրիմադուզա (*Scotodryadusa satunini*) և այլն:



Նկար 13. Արարատյան որդան (*Porphiophora hamelii*)

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում է բուսածածկը:

9.7 Պատմության և մշակութային հուշարձաններ

Արմավիրի մարզն ունի զբոսաշրջային մեծ ներուժ՝ իր հարուստ պատմության և մշակութային հուշարձաններով: Այստեղ հաշվառված է 430 հուշարձան: Եզակի են նեոլիթյան բնակատեղին (մ.թ.ա VIII-V հազարամյակներ՝ Արատաշեն գյուղ), Մեծամորի հինգհազարամյա հնության (բրոնզեդարյան) մետաղաձուլարանը, նեոլիթ-էնեոլիթյան (Թեղուտ), վաղբրոնզեդարյան (Մոխրաբլուր), բրոնզեդարյան (Մեծամոր), ուրարտական (Արագած), հելլենիստական (Փարաքար) ժամանակաշրջանների կառույցներ ու բնակատեղիները: Արաքս գետի նախկին հունի ձախ ափին գտնվել է հայոց նախկին մայրաքաղաքը՝ Արմավիրը: Արաքսի ու Ախուրյանի միախառնման տեղում նշմարվում են Երվանդաշատի փլատակները:

Այստեղ են նաև սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այդր լիճը, Մուսալեռ և Սարդարապատ հուշահամալիրները:

Դրանք հնագույն բնակատեղիներ են, քարեդարյան կացարաններ, միջնադարյան գյուղատեղիներ, պաշտպանական, հոգևոր, տնտեսական կառույցներ, գերեզմանոցներ,

կոթողներ և խաչքարեր և այլն: Ժամանակագրական առումով նրանք ընդգրկում են վաղնջական ժամանակներից մինչև մեր ժամանակները:

ՀՀ Կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի հանրապետության Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձանների» N 385-Ն որոշման հավելված 4-ում բացակայում է Բաղրամյան համայնքի և Լեռնագոգ բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը, ինչի պատճառով անալոգիայի կարգով ներկայացվում է Արմավիր քաղաքինը՝ ներառված է 1 հուշարձան:

ԱՐՄԱՎԻՐ (ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ) քաղաք

Աղյուսակ 6

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարներ)		Հուշարձանախումբը, հուշարձանը	Սիմվոլը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (համընթացության, տեղական)	Ծանոթագրություն?
1	2	3	4	5	6	7	8
1			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ		քաղաքային զբոսայգում	S	1

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն Արմավիրի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձաններ

Աղյուսակ 7.

1	ջրագրական հուշարձան «Մեծամոր» լիճ,	Տարոնիկ գյուղից մոտ 3կմ հյուսիս-արևմուտք գտնվող
2	կենսաբանական հուշարձան՝ «Ավազաերթ (պսամոֆիլ) բուսականություն»,	Վ.աղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
3	կենսաբանական հուշարձան՝ «Զրաճահճային բուսականություն»	Մեծամոր լիճ

9.8. Հատուկ պահպանվող տարածքներ

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա :

«Որդան Կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի N61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արագափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում: Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «Որդան կարմիր» պետական արգելավայրի կանոնադրությունը հաստատելու մասին N 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

Արգելավայրն ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատից և Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ: Պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղադիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

Նկար 14.

Արմավիրի մարզ	«Որդան կարմիր» պետական արգելավայր	21985քկմ	1987
			

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները: Գործունեության տարածքը «Տատիկ» քարե քանդակ Երկրաբանական հուշարձանից գտնվում է 11 կմ հեռավորության վրա:

9.9. Սոցիալ-տնտեսական

ՀՀ Արմավիրի մարզը բնակչության թվով և խտությամբ զիջում է միայն Երևան քաղաքին: ՀՀ Արմավիրի մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.9%-ը, բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում է 215 մարդ, իսկ Արմավիրի տարածաշրջանի բնակչության թվի համեմատ կազմում է 42.2%:



Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի՝ մարզի տարածքը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1231կմ², բնակչությունը՝ 266.6 հազար մարդ: Մարզն իր մեջ ներառում է 8 համայնք, 3 քաղաքային և 95 գյուղական բնակավայրեր: Բնակչության զբաղվածության ապահովումը մարզի համար կարևոր խնդիր է:

Բնակչությունը միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ՝ 6,6%, ասորիներ՝ 0,1%, քրդեր՝ 0,1%, ռուսներ՝ 0,2%: Մարզը հիմնականում գազիֆիկացված է, իսկ համայնքները կարիք ունեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման: Հիմնախնդիր է անտառային տարածքների բացակայությունը, աղակալված, դեգրադացված, էրոզիացված հողերի առկայությունը, ստորգետնյա ջրերի անխնա շահագործումը:

Տարածքը Territory	1 231 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the RA, %	4.1
Համայնքներ, 2023թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2023	8
Քաղաքներ Towns	3
Գյուղեր Villages	95
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	266.6 հազ. մարդ/ ths. person
<i>այդ թվում՝</i> <i>including:</i>	
քաղաքային urban	82.9 հազ. մարդ/ ths. Person
գյուղական rural	183.7 հազ. մարդ/ ths. Person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ., % Share of marz population in the total population of the RA 2022, %	9.0
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ., % Share of urban population size 2022, %	31.1
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	96 896.5 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	39 764.1 հա/ ha

Արմավիրի մարզը տարածքով ամենափոքր, սակայն խիտ բնակեցված և բնակչության թվաքանակով ամենամեծ մարզն է ՀՀ-ում: ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 96 896,5 հա, որից վարելահողերը՝ 39 764,1 հա: Գյուղատնտեսության ոլորտում հիմնականում մշակվում են հացահատիկա-ընդեղենային և բանջարաբուստանային մշակաբույսեր, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բուստանաբուծությունը՝ հացահատիկաընդեղենային և բանջարաբուստանային մշակաբույսեր: Զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Արմավիրի մարզն հարուստ չէ օգտակար հանածոներով, առկա է 42 հանքավայր: Արդյունաբերությունը մասնագիտացված է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2022թ.-ին Արմավիրի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 8.

Արդյունաբերություն	6.3%
Գյուղատնտեսություն	22.0%

Շինարարություն	5.7 %
Մանրածախ առևտուր	4.2 %
Ծառայություններ	1.5 %

Մարզի տարածքով է անցնում «Հարավկովկասյան» երկաթուղու Երևան-Թբիլիսի 70կմ երկարությամբ հատվածը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով: Գործում են 58 բժշկական կազմակերպություններ: Այստեղ է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը, Արմավիրի ՀԱԷԿ-ը: Համաձայն Արմավիրի մարզի 2017-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ Հայկական ԱԷԿ-ի աշխատակազմի շուրջ 78%-ը Արմավիրի մարզի բնակիչներ են: Մարզում կան բոլոր հնարավորությունները՝ հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական, ագրո և էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը:

Բաղրամյան բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում:

Նկար 16



Բաղրամյան խոշորացված համայնք՝ կենտրոնը գ. Բաղրամյան. համայնքը ներառում է 14 գյուղեր՝ Բաղրամյան, Քարակերտ, դավարիկ, Լեռնագոգ, Արգինա, Արտամետ, Արևադաշտ, Բագարան, երվանդաշատ, Կողբավան, Հուշակերտ, շենիկ, Տավորիկ, Վանանդ բնակավայրերը և Ֆերիկ եզրիական էթնիկ համայնքը: Համաձայն համայնքի էլեկտրոնային կայք <http://www.bagramyan.am/Pages/CustomPage/> վարչական տարածքը կազմում է 46500հա, բնակչության ընդհանուր թիվը կազմում է 19957 մարդ: Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 920-1200մ բարձրությունների վրա: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 61 կմ, մարզկենտրոն Արմավիրից՝ 18 կմ, պետական սահմանից

ուղիղ գծով՝ 15կմ: Բաղրամյան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արևմտյան հատվածում, սահմանակից է Երվանդաշատ և Բագարան համայնքներին: Բաղրամյանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Համայնքը շրջապատված է լեռներով ու լեռնաշղթաներով: Բաղրամյանի առջև Արարատ լեռան տեսարանն է, իսկ հյուսիսում վեր է խոյանում Արագածը:

Համայնքի հողային ֆոնդը կազմում է 2768.73 հա, որից գյուղնշանակության հողերը՝ 22.07 հա: Համայնքում առկա են 13 հանրակրթական դպրոց, 5 գրադարան, 3 երաժշտական դպրոց, 8 նախադպրոցական հիմնարկ, գերեզմանատներ, աղբավարեր, ներհամայնքային ճանապարհներ:

Համայնքում առկա են բոլոր ենթակառուցվածքները, գազիֆիկացված է: համայնքի տարածքով են անցնում միջպետական և հանարապետական նշանակության ավտոճանապարհներ/40կմ/:

Լեռնագոգ բնակավայր. գտնվում է Արմավիրի մարզում՝ ծովի մակերևույթից 1020-1035մ բարձրության վրա: Համաձայն Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի՝ Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքը հիմնադրվել է 1978թվականին, տեղակայված է Արտենի լեռան լանջին, վարչական տարածքը կազմում է 2298հա: Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 25 կիլոմետր, մայրաքաղաք Երևանից՝ 65 կիլոմետր՝ մայրաքաղաքին և մարզկենտրոնին կապում է ավտոբուսային երթուղիներով:

Կլիման չոր, խիստ ցամաքային է: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 9-11°C-ի սահմաններում: Շոգ օրերը տևում են ավելի քան չորս ամիս՝ ուղեկցվելով չոր եղանակներով: Հուլիս և օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 25-30°C է, իսկ առավելագույնը 41.5°C: Տարեկան տեղումները տատանվում են 250-350 մմ-ի սահմաններում: Ձմեռը չափավոր ցուրտ է, հունվարի միջին ջերմաստիճանը -40C-ից -6 °C է, նվազագույնը -28°C: Բնակավայրը խիտ բնակեցված չէ, 2023թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչությունը կազմում է 2349 մարդ, ազգային փոքրամասնություններ չկան: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, թռչնաբուծությամբ և անասնապահությամբ: Լեռնագոգի գյուղատնտեսական նշանակության հողերը հիմնականում չեն մշակվում ռոտզման ջրի սակավության պատճառով: Բնակավայրի վարչական տարածքում գտնվում են բազալտի և խարամի հանքավայրեր:

Համայնքի տարածքում գործող եկեղեցիներ չկան: Համայնքն ունի պուրակ՝ Լեռնագոգի մշակույթի տան շրջակայքում: Այստեղ մայիսյան հերոսամարտերի զոհերի հիշատակին նվիրված 2005թ-ին կառուցվել է հուշարձան: 2005թ.-ին համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ բարեկարգվել է հուշարձանի տարածքը և կանգնեցվել է խաչքար նվիրված եղեռնի զոհերի հիշատակին: Այստեղ պարբերաբար կազմակերպվում է ծառատունկ: Բնակավայրում առկա են բոլոր ենթակառուցվածքները, մասնավոր հիմնարկներ, հացամթերքի կոմբինատը, առևտրի սպասարկման խանութներ, մեկ միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, գրադարան, երաժշտական դպրոց, բուժ. ամբուլատորիա, գերեզմանատուն: Կատարվում է կանոնավոր աղբահանություն:

Բնակավայրը գտնվում է կիսաանապատային գոտում, բացակայում են բնական կանաչապատ տարածքները, հիմնական կանաչապատ տարածքը գտնվում է Լեռնագոգի մշակույթի տան տարածքում:

Բնակավայրի հիմնախնդիրներից են՝ բավական բարձր գործազրկությունը և աղքատության մակարդակը, ներհամայնքային ճանապարհների վիճակը, ոռոգման ջրի սակավությունը և այլն:

Նախատեսվում է բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային վիճակը և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր, իրականացնել փողոցային լուսավորության անցկացում, փողոցների բարեկարգում, սպորտային հրապարակի կառուցում, ջրամատակարարման համակարգի և ոռոգման ցանցի նորոգում և այլն:

Արևակայանների կառուցումը չի խաթարի համայնքի և բնակավայրի հեռանկարային զարգացման ծրագրին, այլ կնպաստի համայնքում և Լեռնագոգ բնակավայրում էլեկտրամատակարարման համակարգի բարելավմանը, ինչը բխում է համայնքի հնգամյա ծրագրից՝ էլեկտրամատակարարման համակարգի բարելավում, գիշերային լուսավորության ապահովում:

10. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները/շինարարության և շահագործման , փակման փուլեր/

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի հողամասում՝ 5.0012 հա տարածքի վրա 10/0.4կՎ լարման 2x2000 կՎԱ հզորությամբ ՏԵ-ի տեղադրում և սնուցում 10 կՎ օդային գծով:

Համաձայն ՀԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկանքի արևային կայանը հնարավոր է միացնել Դալարիկ 110/35/10 կՎ ենթակայանի 10կՎ ԲՄ-ին՝ տեղադրելով նոր 10կՎ բջիջ:

ՀՀ Կառավարության 13 ապրիլի 2023թվականի «ԷԼԵԿՏՐՈՎՈՐՈՒՄԱՆ ԳԾԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 523-Ն որոշման համաձայն /գլուխ 4 աղյուսակ 1-ի/, 35կվ լարման ՕԳ-ի անվտանգության գոտին 15մ է՝ ծայրային հաղորդալարից, իսկ 110կՎ ՕԳ-ի անվտանգության գոտին՝ 20մ: Տարածքով անցնող «ՀԷՑ» ՓԲ ընկերության հաշվեկշռում գտնվող 110 կՎ և 35 կվ-օդային գծերի անվտանգության գոտիները պահպանված են, անվտանգության գոտու տարածքում ոչինչ չի տեղադրվում:

10.1 Շինարարության փուլ


Լեռնագոգի վարչական տարածքում նախատեսվում են իրականացնել արևակայանի կառուցում, որի համար նախատեսվում է շինհրապարակի կազմակերպում՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով:

10.1.1 Շինհրապարակ.

Գործունեության իրականացման համար կազմակերպվելու շինհրապարակ, որն ամբողջ գործունեության տարածքն է:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ

"ՅՈՒՆԻՔՈ" ՍՊԸ 3.000 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայան
ՀՀ, Մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան գյուղ Լեռնագոգ



- հանդերձարան՝ 1 հատ
- պահակատուն՝ 1 հատ
- նյութերի պահեստավորման տարածք՝ 1 հատ
- բիոզուգարան՝ 1 հատ
- աղբի հավաքման կետ՝ 1 հատ
- լուսավորության հենարաններ՝ 2 հատ
- հակահրդեհային վահանակ 2 հատ
- մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ, 8,0x3,5 մ չափերի:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Շինարարության ժամանակ աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, գրասենյակը, տեղադրվելու են ժամանակավոր վազոն տնակներում (օպերատորական շինությունում):

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման հարթակ՝ յուրաքանչյուրը 8,0x3,5 մ չափերի: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1 հատ 85մ³ չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

10.1.2 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.

Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Օգտագործվելու են, մասնավորապես.

- հորատող-1հատ,
- հարթեցնող-1 հատ
- ինքնաթափ-1 հատ,
- ավտոաշտարակ-1 հատ,
- էքսկավատոր- 1 հատ և այլն:

10.1.3. Լուսավորություն և ջեռուցում.

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ), որի լուսավորությունը և ջեռուցումը կկատարվի ժամանակավոր էլեկտրական հոսանքի անցկացման` դիզելգեներատորների միջոցով:

10.1.4. Հողային ռեսուրսներ.

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ` կայանի կառուցման ժամանակ կատարվելու են` արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, հենասյունների տեղադրման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ:

Օդային գծերի և ենթակայանի կառուցման ժամանակ խրամուղիների և հենասյունների փորման և այլ գործողությունների արդյունքում հանվելու է մոտ 50խմ գրունտ, որից մոտ 35խմ հողային գրունտն օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար: Մնացած մոտ 15խմ հողային զանգվածը տեղափոխվում է մոտ 7կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր` համայնքի համաձայնությամբ:

Արևային կայանի հետ կապված գործողությունների արդյունքում հանվելու է մոտ 750խմ գրունտ, որից մոտ 720խմ հետ լիցք, մնացած 30խմ կհեռացվի աղբավայր:

Ընդամենը հանվելու է 800խմ հողային գրունտ, որից 775խմ կատարվելու է հետ լիցք, մնացած 25խմ կհեռացվի աղբավայր` համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

10.1.5. Ջրային ռեսուրսներ.

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում` շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով` պայմանագրային հիմունքներով` ըստ պահանջի: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող` շարժական 1,0*1,5 չափերի 1 հատ բիոզուգարան` լվացարանով:

10.1.6. Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- շինարարական աղբի տեսքով` նյութերի մնացորդներ (ավազ, շեբեն, ցեմենտ,

պլաստմասե իրեր և այլն),

- աղտոտված լաթեր, պարկեր,
- կենցաղային աղբ
- մետաղական մնացորդներ(մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն):

10.1.7. Սոցիալական.

Շինարարական աշխատանքներին ներգրավելու են 23 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

10.1.8. Բարեկարգում.

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

10.1.9.Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Ընդհանուր գործողությունները տևելու են 24 ամիս, որից արևակայանի, ենթակայանի տեղակայման և ՕԳ-ի անցկացման աշխատանքները տևելու են 10 ամիս՝ ըստ ժամանակացույցի:

Նկ.2 Կայանի կառուցման ժամանակացույցը

Գործողություն	ամիսներ										
	1-2	3-4	5-6	7-12	13-15	16	17-18	19-20	21-22	23-24	
Տեխնոլոգիայի ստացում, Նախագծային, - նախահաշիվ, Աշխատանքներ	■	■	■								
Նախագծի փորձաքննություններ				■							
Նախն. ենթակառուցվածք. լուծումներ			■								
Հողային աշխատանքներ					■						
Ճանապարհ, ցանկապատ						■					
Մետաղական հենասյուների մոնտաժ							■				
Օժանդակ շենք-շինությունների կառուցում								■			
Արևային ՖՎ վահանակների տեղակայում									■		
Այլ սարքավորումների տեղակայում										■	
Արևային համակարգերի էլեկտրամոնտաժ										■	
Բարձր լարման գծի հենասյուների տեղադրում										■	
Տրանսֆորմատորների տեղակայում										■	
Կարգաբերման-գործարկման աշխատանքներ										■	
Ավարտական փաստաթղթերի ստացում, էլեկտրակայանի գործարկում										■	

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

1. Նախագծային աշխատանքներ:
2. Հողային աշխատանքներ
3. ճանապարհի կարգաբերում, ցանկապատ:
4. Մետաղական հենակառուցվածքներ :
5. Օժանդակ շենք-շինություններ:
6. Վահանակների տեղակայում :
7. Այլ սարքավորումների տեղակայում և այլն:

10.1.10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Ջուր: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից: Պայմանագիրը կկնքի Կապալառու կազմակերպությունը՝ շինարարական աշխատանքների կատարման ժամանակ:

Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 2 հատ 2 տ տարողության բաքի մեջ : Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Շինարարությունը տևելու է 260 օր, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 23 աշխատակից, որից 3-ը ԻՏՌ:

Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է տարածքի հրդեհամարման, անիվների լվացման, տարածքի ջրցանման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 20 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 260 օր:

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 20 \times 0.025) \times 260 = 142,5 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,548 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Անիվների լվացման համար Շինարարության փուլում նախատեսվում է մեքենաների լվացում՝ 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ, տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 1 = 0.8 \text{ Լ/վրկ}$$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ՝}$$

S1 – ջրվող տարածքի մակերեսը 1000 մ², (արդիրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 78 (առավելագույնը 78օր) հողային աշխատանքների ժամանակ:

$$U1 = 1000 \times 0.0015 \times 78 = 1170 \text{ մ}^3 / \text{շին. ժամ. :}$$

Օգտագործվող նյութեր.

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ
- մետաղ՝ այրումին, պողպատ
- մեկուսիչ նյութեր
- բետոն
- խիճ
- փայտանյութ:

Արևակայանի, և ենթակայանի կառուցման, ՕԳ-ի հենասյուների հիմքերի ամրացման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիաների հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Տարածքում վառելիքի պահեստավորում չի նախատեսվում:

10.2 Շահագործման փուլ.

Շահագործման փուլում բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում, գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Արևակայանն ապահովված է լինելու, արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

Ընդհանուր 5, 0012 տարածքից օգտագործվելու է 4,0524 հա, նկատի ունենալով հարակից տարածքով անցնող երկաթգիծը, պահպանվել են երկաթգծի 50մ անվտանգության գոտին:

10.2.1 Արևային կայան: Նախատեսվում է կառուցել 3.355 ՄՎտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային կայան 1020մ բարձրության վրա, իսկ էլքային հզորությունը սահմանվում է 3.0 ՄՎտ:

Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 5592 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 600 Վտ պ առավելագույն հզորությամբ, որոնք 10 հատ 300կՎտ էլքային հզորությամբ փոխակերպիչների

փոփոխական հոսանքի էլուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին:

Ընտրվել են TSM-NEG19RC.20 Trina Solar Co., Ltd. ֆիրմային արտադրության 22% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 595Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2382x1134x30մմ:

Փոխակերպիչները Huawei Technologies Co., Ltd. արտադրության, մոդելը SUN2000-330KTL-H2 հզորության, ցանցային տեսակի:

Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով, և բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 30՝ թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակները զբաղեցնելու են 11200քմ տարածք:

Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է, (ՀՀՇՆ 22.01-2024):

Արևային կայանի տարածքում կառուցվելու է Ե/կ 2 x 10/0.8կՎ, 2000կՎԱ հզորության ենթակայան, համաձայն ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի միանալու է Դալարիկ 110/35/10 կՎ ենթակայանի 10 կՎ ԲՄ-ին՝ տեղադրելով նոր 10 կՎ բջիջ, ինչպես նաև կառուցելով 10 կՎ ՕԳ:

10.2.2. Ենթակայան Ենթակայանում նախատեսվում է տեղադրել 10/0.8կՎ լարման 2x2000կՎԱ հզորության եռաֆազ երկփաթույթ, եռանկյունի-աստղ սխեմայով TМГ տիպի հերմետիկ յուղային տրանսֆորմատորներ: Ենթակայանում նախատեսվում են երկու տրանսֆորմատորների համար հատկացված խցեր, իսկ 10կՎ և 0.8կՎ սարքավորումները նախատեսվում են տեղադրել մեկ սենյակում: TМГ տիպի տրանսֆորմատորների հովացման համար տրանսֆորմատորային խցերում դռներին և պատերին նախատեսվում են շերտավարագույրներ, իսկ խցերում օդի շրջապտույտը ապահովելու համար նախատեսված է դռան վերևում կառուցել դիաֆրագմա և շերտավարագույր: Օդի ներածման և արտածման համար նախատեսված շերտավարագույրների մակերեսի ընտրության համար կատարվել է հաշվարկ ելնելով ընտրված տրանսֆորմատորի կարճ միացման հոսանքի մեծությունից: Յուրաքանչյուր տրանսֆորմատորի տակ նախատեսվում է փոս 1.8x1.8x0.5 չափերով, որոնք մետաղական խողովակով կապված են դրսում տեղադրվող յուղընդունիչին: Քանի որ տրանսֆորմատորները հերմետիկ են և յուղի ընդարձակման բակեր առկա չէ, որից հնարավոր է յուղի արտահոսքը, նախատեսվում է երկու տրանսֆորմատորների համար մեկ յուղընդունիչ: Այն հիմնականում ծառայելու տրանսֆորմատորների հրդեհի ժամանակ արտահոսող յուղի և հրդեհի մարող ջրի հավաքման համար: Յուղընդունիչի համար նախատեսված է 5տ տարողության կամ 2.0մx2.0մx1.5մ չափերով մետաղական բակ, որը տեղադրվում է հողի մակերևութից ներքև և որին միանում են տրանսֆորմատորների խցերից եկող էլքային խողովակները: Ենթակայանը զբաղեցնելու է 100,0քառ.մ տարածք:

ՏԵ 10կՎ լարման սարքավորումներ 10կՎ ԲՄ-ում ընտրված է 10կՎ լարման հավաքովի հաղորդադրողների մեկ մասից կազմված համակարգ: 10կՎ ԲՄ-ում նախատեսվում է տեղադրել KCO-298B տիպի բջիջներ՝ 2 հատ մուտքային բջիջ, 2 հատ տրանսֆորմատորի բջիջներ և 1 հատ սեփական կարիքների տրանսֆորմատորի բջիջ: Ուժային շղթաներում նախատեսվում է BB-TEJ 10 տիպի վակուումային անջատիչներ, 600Ա նոմինալ հոսանքով: Երկու ուժային

տրանսֆորմատորները սնվում են մեկ մուտքային բջջից :

ՏԵ-ի 0.8կՎ լարման սարքավորումները Ընդունված է 0.8կՎ լարման հավաքովի հաղորդաձողերի երկու առանձին մասերից կազմված համակարգեր, որոնք սնվում են առաջին և երկրորդ տրանսֆորմատորներից: Տրանսֆորմատորներից դեպի մուտքային վահաններ սնումն իրականացվում համապատասխանաբար առաջին և երկրորդ նոր տեղադրվող տրանսֆորմատորներից, այլումինե հաղորդաղողերի միջոցով: 0.8 կՎ ԲՄ-ն կահավորված է ՄՈ-90 տիպի վահաններով՝ 4 հատ գծային վահան, և 2 հատ մուտքի վահան: 0.8կՎ հավաքովի հաղորդաձողերի կտրվածքը ընտրված է էլնելով 2000կՎԱ ուժային տրանսֆորմատորի հզորությունից, միննույն ժամանակ հաշվի առնելով 30% գերբեռնվածությունը (համաձայն ՄԷՏԿ ՏԿ-ի IV գլխի 8.20 կետի):

10.2.3. Հողանցում և շանթապաշտպանություն. ՏԵ-ի հողակցման սարքավորումն ընդհանուր է 6կՎ և 0.8կՎ լարման համար: Հողակցման սարքավորման դիմադրությունը պետք է լինի 4 Օհմ-ից ոչ ավելի (համաձայն ԷՄՆԸՊ ՏԿ-ի VI գլխի 32.2 կետի): ՏԵ-ի հողակցման սարքավորումը բաղկացած է ներքին և արտաքին եզրագծերից: Ներքին եզրագիծը շենքի ներսում մոնտաժվում է պատերով գետնից 0.5մ բարձրության վրա 4x25 շերտապողպատով (պատին ամրացման համար տեղադրվում են հաղորդաձողակալներ), իսկ պատերի միջով շերտերի անցկացման համար նախատեսվում են Ø50մմ մետաղական խողովակներ: Որպես հողակցման մայրուղիներ օգտագործվում են բոլոր հենարանային մետաղական կոնստրուկցիաները: Այդ նպատակով բոլոր մետաղական կոնստրուկցիաները կցման տեղերում և կողքերում, պետք է իրար միացվեն շերտավոր պողպատով (4x25մմ կտրվածք) էլեկտրաեռակցման միջոցով (տես գծագիր №7): KCO-298B պահարանի և ՄՈ երի հողակցումը կատարվում է մետաղական կոնստրուկցիաներին նրանց գոդման միջոցով: ՏԵ-ի հողանցման ներքին եզրագիծը միացվում է արտաքին եզրագծին նվազագույնը երկու տեղում: Հողակցման արտաքին եզրագիծը իրականացվում է 4x40 շերտապողպատից (հորիզոնական հողանցիչ) և 2.5 մ երկարությամբ 50x50x5մմ անկյունային պողպատից (ուղղահայաց էլեկտրոդ) բաղկացած ցանցի միջոցով: Հողանցման եզրագծի համար կատարվել է հաշվարկ, որը պահվում է արխիվային օրինակում: Գրունտի նկարագրությունը և հողի դիմադրությունը ներկայացված է ստորև: Հողակցման եզրագծի մոնտաժից հետո անհրաժեշտ է ստուգել հողակցման սարքավորման դիմադրությունը: Չբավարարելու դեպքում անհրաժեշտ ավելացնել էլեկտրոդների քանակը՝ նորմային հասցնելու համար: ՏԵ-ի շինությունը շանթի ուղիղ հարվածներից պաշտպանելու համար ՏԵ-ի մետաղական տանիքը անհրաժեշտ է երկու իջեցումներով միացնել հողակցման եզրագծին:

10.2.4. Լուսավորություն և ուժային ցանց. ՏԵ-ի բոլոր սրահներում աշխատանքային լուսավորությունն ընդունված է 220Վ լարման: Լուսավորության ցանցի սնումն իրականացվում է ՅՕՄ-8501Մ3 տիպի լուսավորության վահանից: Իսկ վերանորոգման և շարժական լուսավորությունը կատարվում է 220Վ լարումը 36Վ լարման վերածող ՊՏՊ-0,25-23Մ3 տիպի արկղից: Տրանսֆորմատորի խցերում, 6կՎ և 0.4կՎ ԲՄ-ներում լուսավորությունն իրականացվում է լյումինիսցենտ լուսատուներով: Լուսավորության համակարգը սնող մալուխները մոնտաժվում են պոլիվինիլքլորիդե տուփախողովակների միջոցով (տես գծագիր №6):

10.2.5. 10 կՎ ՄԳ-ի կառուցում Համաձայն տեխնիկական պայմանի սնումն իրականացվում է <<Դալարիկ>> 110/35/10կՎ ենթակայանի 10կՎ ԲՄ-ից:

Նախագծվող 10կՎ ՄԳ-ի երկարությունը 123մ է որից՝ գրունտային հատվածով

խրամուղով՝ 110մ, 8մ N1 հենարանի երկայնքով, 5մ <<Դալարիկ>> 110/35/10կՎ ենթակայանի 10կՎ ԲՄ-ում կոնստրուկցիայով:

10կՎ ՄԳ-ի մալուխն ընտրվել է АПБП-10 3x120մ² կտրվածքի ըստ ՕԳ-ի կտրվածքի: Նախագծվող 10 կՎ մալուխագիծը ներքին տեղադրման ծայրային կցորդիչի միջոցով միանալով <<Դալարիկ>> 110/35/10կՎ ենթակայանի 10կՎ ԲՄ-ին այնուհետև մոնտաժվում է կենստրուկցիայով, այնուհետև գրունտային հատվածով խրամուղով, այնուհետև բարձրանալով N1 նոր տեղարվող հենարանի երկայնքով միանում է նոր կառուցվող 10 կՎ ՕԳ-ին: Մալուխն անցկացվում է հողում, ավազե լցվածքով խրամուղու մեջ և պաշտպանվում է բետոնե սալերով: Մալուխի անցկացման խորությունը 0.7մ է: (տես գծագիր № ԲՎ-054-24-Հ1-1)

Մալուխը տեղադրվում է օձաձև, ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար:

Մալուխը խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե անկողին, այնուհետև տեղադրվում է մալուխը և ծածկվում է 150մմ ավազե շերտով, որից հետո տեղադրվում է բետոնե սալ և խրամուղին լցվում է ավազակոպիճով (տես գծագիր № ԲՎ-054-24-Հ1-1):

Բետոնե սալերի դասավորությունը խրամուղում (կախված խրամուղու հիմքի չափերից) կատարվում է համաձայն ԷԷՀ ՏԿ IV գլուխ 19.1 կետ, գրություն ԴԳ-3768-ի:

ԷԷՀ ՏԿ IV գլխի 19.3 կետի համաձայն, անմիջապես հողում անցկացված մալուխից մինչև շինությունների հիմքերը եղած լուսանցիկ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 0.6մ: Մալուխի թեքման կորի ներքին շառավիղը պետք է լինի ոչ պակաս, քան մալուխի տրամագծի 10-ապատիկը:

10.2.6. 10կՎ օդային գծի կառուցում: 3 ՄՎԱ հզորության <<ՅՈՒՆԻՔՈ>> արևային կայանի համար կառուցվող ՏԵ-ի սնուցման նպատակով կառուցվող օդային գծի համար ընտրվել է AC-70/11 կտրվածքի հաղորդալարերով: Երկարությունը կազմում է 325մ: 10կՎ ՕԳ-ի կտրվածքի ընտրությունն իրականացնելիս հաշվի է առնվել կառուցվող արևային կայանի հզորությունը և տեղանքի կլիմայական պայմանները՝ ըստ քամու II -րդ գոտին է, ըստ մերկասառույցի I -ին գոտին է սառցակալման պատի հաստությունը 10մմ:

10կՎ ՕԳ-ն N1 նոր տեղադրվող 10 կՎ ե/բ հենարանին միանալով նոր կառուցվող 10 կՎ ՄԳ-ին (N1 հենարանի վրա տեղադրվում է KM-1 տիպի ծայրային կցորդիչ), այնուհետև շարունակվում է մոնտաժվել նոր տեղադրվող N2-ից մինչև N6 հենարաններով և սնում նոր կառուցվող 10/0,8 լարման 2x2000 կՎԱ հզորության ենթակայանը:

10կՎ ՕԳ-ի նախագծման համար հիմք է հանդիսացել 3.407.1-143.1 տիպարային նախագիծը:

Համաձայն տիպարային նախագծի 10 կՎ ՕԳ-ի կառուցման համար նախատեսվում են հետևյալ ե/բ հենարանները (ԲՎ-054-24-Հ1-1).

- Միահենակ ծայրային, А10-1 տիպի -1 հատ ,
- Միականգնակ միջանկյալ, П10-1 տիպի -3 հատ,
- Միահենակ խարսխային, А10-1 տիպի TC-2 հավելակցանով -2 հատ:

10.2.7. Տեսահսկման համակարգ. Նախատեսված է նաև տարածքի տեսահսկում արտաքին տեղադրման տեսախցիկներով, որոնք տեղադրվում են լուսավորության հենասյուների վրա:

10.2.8. Օպերատորական շինություն. Տարածքում կառուցվելու է օպերատորական շինություն՝ ներքին հարդարումով: Մոնիթորինգի նպատակով տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

10.2.9. Կրակմարիչներ. Տարածքում նախատեսվում են կրակմարիչեր և հրդեհաշիջման վահանակ:

10.2.10. Պահեստային շինություն. Տարածքում, օպերատորական շինությանը կից նախատեսվում է պահեստային մաս՝ 27 մ² չափերի, խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած վահանակների ժամանակավոր պահման համար:

10.2.11. Ցանկապատում. Կայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվում է՝ 2 մ բարձրության, 2030x2700x25մմ չափերի մետաղական ցանկապատով՝ նախատեսելով մեքենաների 2 դարպասային մուտք (գլխավոր և օժանդակ):

11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն/շինարարության և շահագործման փուլեր/

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի վարչական տարածքը: Գործունեությունն իրականացվելու է 5.0012 հա տարածքի վրա: Նախատեսվում է 3.355 ՄՎտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային արևակայանի կառուցում, ինչպես նաև 10/0.8կՎ լարման 2x2000 կՎԱ հզորությամբ ՏԵ-ի տեղադրում և սնուցում 10 կՎ օդային գծով:

Արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը շինարարության և շահագործման փուլերում հիմնականում կապված են՝

- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի, հողային աշխատանքների արդյունքում օդային ավազան ծխագազերի, փոշու արտանետումների,
- ջրային և հողային ռեսուրսների օգտագործման,
- կենսաբազմազանության, լանդշաֆտի փոփոխությունների,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ:

Արևային ֆոտովոլտային կայանը էլեկտրաէներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպափոխելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում, ինչը կարևոր է բնառեսուրսային վառելիքից զուրկ Հայաստանի հանրապետության համար:

Էլեկտրահաղորդման գծերի կառուցման բոլոր տարրերը պետք է համապատասխանեն

ազգային ստանդարտներին, շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգի (ՏԿ)-ի պահանջներին:

Գործունեության տարածքը կիսանապատային, անբարեկարգ, համայնքի և բնակիչների կողմից չօգտագործվող, բուսածակույթից զուրկ տեղանք է: Գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների փոփոխություններ չեն առաջանալու, կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական էլակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Տարածքի հողի նպատակային նշանակությունը փոխվել է՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի անվտանգ շահագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

11.1 Շինարարության փուլ

11.1.1 Օդային ավազան.

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում գրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Աղյուսակ 8

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /416 ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0,000002	0,000003
CH (ածխաջրածիններ)	0,243	0.00000675	0.000001
NO2 (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.0001	0,00014
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.000001	0,000001
Ծծմբային անհիդրիդ		0,0166	0,025
Անկազմակերպ փոշու արտանետում		0,1	0.15

Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ: Արևային կայանի համար նախատեսված տարածքը հեռու է բնակելի տարածքից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում գրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շահագործման փուլում օդային ավազանի և կլիմայի վրա հնարավոր ազդեցություններ չեն նախատեսվում:

11.1.2 Հողային ռեսուրսներ.

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ արևակայանի, ենթակայանի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների: Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը էներգետիկայի:

Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով: Տարածքում գերակշռում են կավավազային, խճաքարային հողերը, ներկայացված՝ տուֆերով և տուֆուլավաներով, տեղ-տեղ փշային բուսականությամբ:

Տարածքում բացակայում է բուսահողը: Հողային շերտի առաջին շերտը 2-րդ կարգի խճաքարային գրունտներ են:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, ենթակայանում մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների տեղադրման, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ:

Օդային գծերի և ենթակայանի կառուցման ժամանակ խրամուղիների և հենասյուների փորման արդյունքում հանվելու է մոտ 50խմ գրունտ, որից մոտ 35խմ հողային գրունտն օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար: Մնացած մոտ 15խմ հողային զանգվածը տեղափոխվում է մոտ 7կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ համայնքի համաձայնությամբ:

Արևային կայանի կառուցման արդյունքում հանվելու է մոտ 750խմ գրունտ, որից մոտ 720խմ հետ լիցք, մնացած 30խմ կհեռացվի աղբավայր:

Ընդամենը հանվելու է 800խմ հողային գրունտ, որից 775խմ կատարվելու է հետ լիցք, մնացած 25խմ կհեռացվի աղբավայր՝ համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հաշվետվությունում նախատեսվում են գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցությանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում: Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր էկոհամակարգ, դադարելու է գերարածեցումը, առաջանալու են ստվերային տարածքներ, առաջանալու է հողի խոնավության նոր ռեժիմ, նկատի ունենալով թվարկված փոփոխությունները, հնարավոր են հողի որակի առավել դրական փոփոխություններ:

11.1.3 Ջրային ռեսուրսներ.

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ»ՍՊԸ ընկերության կողմից կատարված ուսումնասիրության՝ նախատեսվող գործունեության տարածքում ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ, իսկ կուտակումը՝ լավատակ հնահուներում:

Հայցվող տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների՝ գտնվում են 10մ-ից խորը հորգոններում: Գործունեության տարածքում բացակայում են մակերևութային ջրային հոսքերը: Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ տարածքում բացակայում են գրունտային և մակերևութային ջրահոսքերը:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով և բալոններով՝ ըստ կարիքի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան լիցենզիա ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարման աղբյուրը:

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում տեղադրվելու է 1x1,5 չափերի 1 հատ բիոզուգարան, որի սպասարկումը շինարարության փուլում կատարվելու է մասնագիտացված ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանվորված՝ արևային կայանի շինարարության փուլում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի ենթարկվելու, ուստի արևակայանի շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները:

11.1.4 Կենսաբազմազանություն.

Արևակայանի և ենթակայանի կառուցման տարածքը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր են՝ հողատեսքը էներգետիկայի: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են: Տարածքն անտառածածկ չէ, բացակայում է ծառափային բուսականությունը:

Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, ուստի գործունեության իրականացման հետևանքով կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների ադմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

Շահագործման փուլում Արևային էլեկտրակայան կառուցելու արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի մոտ 30 տոկոսը: Մնացածը մասնակիորեն է ստվերվում, ընդ որում արևածագին և արևամուտին լուսավորվում է ամբողջովին՝ գտնվելով արևի ուղիղ ճառագայթների տակ: Մասնակիորեն լուսավորված տարածքներում հնարավոր է ստեղծվի բուսական նոր համակեցություն, որի կազմում տեղ են գտնելու թե՛ տեղաբնիկ ստվերասեր բույսերը, որոնք մինչև այդ հնարավոր է, որ տարածքներում չեն աճել:

Ստեղծված նոր էկոհամակարգի վրա որոշակի ազդեցություն է թողնելու նաև հողի խոնավության նոր ռեժիմը, որը հետևանք է լինելու մթնոլորտային տեղումներից առաջացող խոնավության անհամաչափ բաշխման: Արևային մոդուլներով ծածկված տարածքի տեղումները ցած հոսելով մոդուլների ցածր եզրից՝ բաշխվելու են տարբեր ձևով, սակայն դրանք կենսաբազմազանության առումով էական փոփոխություն չեն կարող առաջացնել:

Այսպիսով արևային մոդուլներով զբաղեցված տարածքում հնարավոր է ստեղծվի նոր էկոհամակարգ, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար կայունանալու է:

Հաշվի առնելով տարածքի կիսանապատային գոտին, բուսածածկի բացակայությունը, նոր էկոհամակարգի ձևավորման հնարավորությունը և նպաստավոր պայմանները, կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, դրանք ավելի քան դրական միտում են ունենալու:

11.1.5 Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995)՝ 10կգ, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պլումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝ 6կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝ 8կգ թափոնների տեսքով:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)-2կգ/տարի:
 - Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 45 մ³:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 2400կգ/տարի քանակով:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենաձանրաբեռնված հերթափոխի/,
հետևաբար,

$$M=23*120=27600\text{կգ/տարի}$$

Հաշվի առնելով, որ նախապատրաստական և շինարարական աշխատանքները տևելու են 10 ամիս, կենցաղային թափոնների քանակը լինելու է ավելի քիչ:

Շահագործման փուլում. Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 5 տ/տարի քանակով:
Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է

տրանսֆորմատորներում յուղերի քանակությամբ:

- Յուղոտված լարեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 2կգ քանակով:

- Ասֆալտի և ասֆալտբետոնի խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4)՝ 4մ³ քանակով:

- Յուղերով աղտոտված ավազ (կոշտ՝ յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)՝ 0,3մ³:

- Քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ (ծածկագիր՝ 35131200 01 995)՝ 10կգ, Չտեսակավորված այլումինի ջարդոն (ծածկագիր՝ 35310101 01 99 5)՝ 6կգ և Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝ 8կգ քանակներով:

Հաշվետվությունում նախատեսվում են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

11.1.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներ, արգելավայրերը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի կողմից կատարվել է ուսումնասիրություններ և տրվել է համապատասխան եզրակացություն:





Համաձայն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Երկրաբանության ինստիտուտի եզրակացության Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական սահմաններում «ՅՈՒՆԻՔՈ» ՄՊԸ կողմից արևային ֆոտովոլտային կայանի համար նախատեսված 5,0012հա մակերեսով տարածքը պատմամշակութային միավորների վրա հնարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ տարածքում պատմա մշակութային միավորներ չեն փաստագրվել:

11.1.7 Աղմուկ և թրթռում.

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

Արևակայանը և ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ նկատի ունենալով բնակավայրերից ունեցած հեռավորությունը, այն չի կարող զգալի էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավականին մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

Արևային կայանի շինարարությունը և շահագործումը կատարվելու է ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1933-Ն որոշման՝ «ԷԼԵԿՏՐՍԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունում նախատեսվում են աղմուկի մակարդակի մեղմանն ուղղված միջոցառումներ:

11.1.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում կապված.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում,փոթորիկ),
- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել.

- հնարավոր հրդեհային իրավիճակների,
- կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

11.1.9 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

. ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ էներգետիկայի, քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,

- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ, որից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ կազմակերպում և աշխատանքի ընթացքում անվտանգության պահպանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:

Շինարարության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Կայանի կառուցման փուլում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

Շահագործման փուլում Արևակայանի, ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ոլորտին առնչվող ՀՀ օրենքների, կառավարության որոշումների, տեխնիկական կանոնակարգերի, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան:

11.1.10 Սոցիալական.

Գործունեությունն իրականացվելու է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքում:

Գործունեության իրականացման ընթացքում առաջանալու են բնակչության շրջանում սոցիալական խնդիրներ, սոցիալական ազդեցություններ, կապված.

- Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր վնասներ կից գտնվող արոտավայրերին, ճանապարհներին:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:

- Դրական սոցիալական ազդեցություններ՝ կապված համայնքում նոր ենթակառուցվածքների ստեղծման և նոր աշխատատեղերի բացման հետ:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շինարարության փուլում սոցիալական ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի դրական սոցիալական ազդեցություններ:

-կստեղծվի նոր աշխատատեղեր և որոշակիորեն կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են 2-4 աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով:

Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Համայնքի պահանջով, որն ամրագրվել է համայնքի կողմից ներկայացված նախագծման թույլտվությունում, ինչպես նաև հանրային լսման ժամանակ, համայնքի կողմից առաջարկ է եղել բարեկարգել գոյություն ունեցող գրունտային ճանապարհը և ճանապարհի եզրային մասերը կանաչապատել՝ ծառերի տեսքով: Ծառատնկումը կատարվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով: Ճանապարհի բարեկարգման և կանաչապատման աշխատանքները Ձեռնարկողի կողմից լինելու է որպես սոցիալական աջակցություն համայնքին, որի իրականացման աշխատանքների ծավալները, իրականացման եղանակները կքննարկվի համայնքի հետ՝ գործունեության իրականացման ընթացքում: Նշված ճանապարհը դուրս է նախատեսվող գործունեության համար հատկացված տարածքից:

11.1.11. Լանդշաֆտ և Բարեկարգում.

Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Սակայն այն չի ունենալու տեսողական ազդեցություն, քանի որ գործունեության տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու՝ անբարեկարգ տարածքում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

Գործունեության տարածքում կանաչապատման աշխատանքներ չեն նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհանվտանգությունից:

12.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան)

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Նախագծի և բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

12.1 Շինարարության փուլ.

12.1.1 Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը և հողային գրունտը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերը և հողային զանգվածը պահել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացնել ստուգումներ՝ պարբերաբար,
- բացառել թափոնների այրումը բաց տարածքներում:

12.1.2. Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով,
- հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարել այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է շինհրապարակի առանձնացված տեղերում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,

- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Շահագործման փուլում Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է տարածքների մաքրում և բարեկարգում:

12.1.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շշերով),

- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով ենթակայանի տարածքում կտեղադրվի 2 հատ՝ 2տ տարողության ջրի բաք,

- շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,

- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և հողածածկը և ասֆալտածածկը չվնասելու համար:

Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական կան հոսքաջրերի շրջակա միջավայրի աղտոտման կանխարգման նպատակով.

- կտեղադրվի 1 հատ 1x1.5 չափերի բիոզուգարան,
- բիոզուգարանի մաքրումը կատարել լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում

. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շէերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան),
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- արևային կայանի պանելների մաքրում կամ լվացում չի նախատեսվում, խիստ անհրաժեշտության դեպքում այն կիրականացվի չոր եղանակով:

12.1.4 Կենսաբազմազանություն.

Տարածում բացակայում է բուսածածկը, ուստի գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է միայն կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար միջոցառումներ.

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- խախտված հողային զանգվածի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով,

- շինարարական աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար:

Շահագործման փուլում Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

- ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը

- կամ բնադրումը բացառելու նպատակով,
- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,
- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:

12.1.5.Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

-խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և տեղափոխել,
- մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

-շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնի մնացորդներ, եռակցման խարամը կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, անհրաժեշտ քանակի դեպքում կհանձնվեն շինարարական ընկերություններին,

-ավելցուկային հողային գրունտը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր,

- շինհրապարակում կենցաղային աղբը հավաքել համապատասխան աղբարկղերում և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխվելու են աղբավայր:

Շահագործման փուլում Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- տրանսֆորմատորների տակ կառուցվելու է 1 հատ առանձին յուղընդունիչ-յուղահավաք առավելագույնը 5տ տարողությամբ, որի մեջ լցվելու է յուղ:

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և

հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու են ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 27մ² չափերով փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ պայմանագրային հիմունքներով՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

12.1.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Համաձայն ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի կողմից տրված գործունեության ենթակա տարածքի ուսումնասիրության արդյունքների գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները: Մակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարակից տարածքներում առա են պատմամշակութային շերտեր, նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

12.1.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկական օգտագործել միայն սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

Շահագործման փուլում Արևակայանի, ենթակայանի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը,

- Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

12.1.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հրդեհանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովել հրդեհաշիջման վահանակով՝ 2 հատ, հակահրդեհային կրակմարիչներով, տեղադրվելու է ջրի բաք,

- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին, տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել թռիչքաձև միացող օդային գծի հաղորդալարերի բարձր հաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, մթնոլորտային և քիմիական ներգործությունների նկատմամբ կայունությունը,

- ավտոմոբիլային ճանապարհների վրա բոլոր տեսակի աշխատանքները կատարել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 12 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դրանց տնօրինողների և շահագրգիռ այլ մարմինների հետ համաձայնեցված պայմաններով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանն և ենթակայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով,

- արևակայանի տարածքում տեղադրվելու են փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ, 25 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության

հնարավորությամբ, 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ,

- պարբերաբար ստուգվելու են աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,
- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 2-4 աշխատողի միջոցով:

12.1.9 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Մարդու առողջության և անվտանգության կանոնները կպահպանվեն առաջնորդվելով 21 ապրիլի 2023 թվականի էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին ՀՀ կառավարության N 583-Ն որոշման պահանջներով և պայմաններով:

Շինարարության փուլում աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շին. հրապարակն ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, տեղեկատվական, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- նախազգուշացնող պլակատների փակցնում էլեկտրատեղակայանքներ պարունակող շինությունների, ցանկապատերի, օդային գծերի հենասյուների և հենարանների վրա՝ նշելով էլեկտրատեղակայանքի սեփականատիրոջ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարները և այլն,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության արքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնության վայրում խոտանված սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, մի քանի շինարարական տեխնիկական միջոցների աշխատանքը մեկ

տեղամասում,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- մալուխային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլում

Նախատեսվում է.

-ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,

- կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,

-պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով,

-էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:

Արևակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:

12.1.10 Սոցիալական.

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 23 մարդ, որոնք աշխատելու են 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Արևակայանին ամենամոտ գտնվող Լեռնագոգ բնակավայրի մոտակա տնից գտնվում է 147,2մ, հեռավորության վրա՝ ճանապարհին կից: Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային և ասֆալտապատ ճանապարհները:

Շահագործման փուլում ընդգրկվելու են 2-4 աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով, հերթափոխային գրաֆիկով: Գործունեությունը նպաստելու է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

12.1.11 Լանդշաֆտ, բարեկարգում.

Լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մրեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,
- գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվում տարածքից,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,
- մաքրվելու են պանելների մակերևույթները,
- Արևակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 2030x2700x25մմ չափերի 2 մ բարձրության մետաղական ցանկապատով՝ 2 դարպասներով, իսկ ենթակայանի տարածքը՝ 50x50x2.5մմ չափերի 2 բարձրության ցինկապատ մետաղալարով:

Ենթակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու են կամ լցվելու են մանրախճով:

Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու:

13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	<p>Շինարարության փուլ</p> <p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>-շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,</p> <p>- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,</p> <p>-տարածքում նուրբերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,</p> <p>-շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p> <p>Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:</p>	Կապալառու	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
2	Հողային ռեսուրսներ	Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.	Կապալառու	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<ul style="list-style-type: none"> - արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով, - հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար, - ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարել այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր, - շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, - շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է շինհրապարակի առանձնացված տեղում: - շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: <p>Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - ընկերության կողմից հնարավորինս կպահպանվեն գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները, - հողերի մաքրում և վերականգնում: 		
--	-------------------------	---	--	--

3	Ջրային ռեսուրսներ	<p>Ջրային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շէրով), - աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կդեղադրվեն 2 հատ՝ 2 տոննա տարողության ջրի բաքեր, - շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով, - ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը, - ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության, - պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, 	Կապալառու	«ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<ul style="list-style-type: none"> - շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի: <p>Կեղտաջրեր.</p> <ul style="list-style-type: none"> - Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական հոսքաջրերի հեռացման համար տեղադրել բիոզուգարան, -բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրյին հիմունքներով: <p>Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -աշխատողների համար խմելու ջուրը կբերվի պատրաստի վիճակում՝ շտերով, -աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան), 		
--	--------------------------------	--	--	--

		<p>-բիռզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>-արևային կայանի պանելների լվացում կամ մաքրում չի նախատեսվում:</p> <p>Անհրաժեշտության դեպքում կիրականացվի չոր եղանակով:</p>		
4.	<p>Կենսաբազմազանություն</p> <p>Շահագործման փուլ</p>	<p>Արևային կայանի կառուցման տարածքում բացակայում է բուսականությունը:</p> <p>-շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:</p> <p>- խախտված հողային զանգվածի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով,</p> <p>Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.</p> <p>- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:</p>	Կապալառու	«ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ
5.	Թափոններ	<p>Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որի համար նախատեսվում է.</p> <p>- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների</p>	Կապալառու	«ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<p>կուտակումից, - նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր, և այլն) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից, կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, - շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, կքավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, - կենցաղային աղբը հավաքվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ, - շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխվելու են աղբավայր: Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով</p>		
--	--------------------------------	--	--	--

		<p>նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - կառուցվելու է յուղընդունիչ-յուղահավաք ընդհանուր առավելագույն 5տոննատարողությամբ: - հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին, - հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին, - յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - սև մետաղի ջարդոնը հանձնվելու է 		
--	--	---	--	--

		<p>մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ շենքում՝ վազոն տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:</p>		
6.	Արտակարգ իրավիճակներ	<p>Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային, կրակմարիչներով, տեղադրվելու է 2 հատ ջրի բաքեր, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն, - տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով, - հեղուկ նյութերը կտեղափոխվեն շինարարական հարթակ օգտագործումից առաջ և կպահվեն հատուկ տակդիրների վրա հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - օդային գիծը կառուցել էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (ԷԷՀ ՏԿ) գլուխ VI 46.1 կետի՝ չբնակեցված տարածքներում ապահովելով գետնից 6 մ բարձրություն, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: <p>-Արևակայանը և ենթակայանն ապահովված են</p>	Կապալառու	«ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<p>լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, -25 հատ արտաքին լուսավորության հենասյուներով և տեսախսկման սարքերով, - պարբերաբար ստուգվելու են աղետների հակազդելու համակարգերի աշխատունակությունը, - գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տեխնաձին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառվելու են միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը: - տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:</p>		
7.	Աղմուկ և թրթռում	Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.	Կապալառու	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, - պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները: - արևակայանի, ենթակայանի և դրանց տարրերի իրականացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը, - Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա: 		
<p>8.</p>	<p>Պատմամշակութային հուշարձաններ</p>	<p>Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա</p>	<p>Կապալառու</p>	<p>«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ</p>

		գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:		
9.	Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն	<p>Գործունեության իրականացման շինարարության ընթացքում հնարավոր են աշխատողների հետ կապված վնասվածքներ, որի համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - շին.հրապարակն ապահովված է լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, - շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության արքերով՝ գիշերային տեսանելիության 	Կապալառու	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<p>հնարավորությամբ,</p> <ul style="list-style-type: none"> - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան: - հաղորդակարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին, - պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ զծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով, - էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը 		
--	--------------------------------	---	--	--

		<p>հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական զծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:</p> <p>- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:</p>		
10.	Սոցիալական	<p>Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 23 մարդու համար:</p> <p>Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:</p> <p>Շահագործման փուլում ընդգրկվելու են 2-4 աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով, հերթափոխային գրաֆիկով:</p> <p>Էլեկտրահաղորդման զծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:</p>	Կապալառու	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
11.	Բարեկարգում, լանդշաֆտ	<p>Լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>-բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները, պահպանել ռեյիեֆի բնական ձևերը,</p>	Կապալառու	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ

	<p>-գործունեության տարածքը մաքրել թափոններից, հնարավորինս վերականգնել լանդշաֆտը, - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից, -կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ, - -մաքրվելու են պանելների մակերևույթները, -Արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է:</p>		
--	---	--	--

14. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր)

Աղյուսակ 14

Գործողություններ Շինարարության փուլ	Մոնիթորինգի վայրը, պարբերականությունը (ժամանակամիջոցը),	Մոնիթորինգի եղանակը, ձևը	Մոնիթորինգի Պատասխանատու Վերահսկող
1. Օդային ավազան արտանետումները մեղմում՝ օդի աղտոտումը կանխելու նպատակով (փոշի, ծխազագեղ)	Շինհրապարակում Ամենօրյա Շաբաթը 1 անգամ	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում չափագրում՝ համապատասխան մասնագետի կողմից	Կապալառու «ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
2. Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու նպատակով	Շաբաթը մեկ անգամ	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ տեսողական ուսումնասիրություն	Կապալառու «ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
3. Շինարարական նյութերի ներկրման և թափոնների տեղափոխում, կենցաղային աղբի հեռացում	Գործունեության տարածքից, շինհրապարակից: Չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու «ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
4. Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության վերահսկում	Գործունեության տարածքում, շինհրապարակում Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրություններ, անվտանգության կանոնների պահպանում	Կապալառու «ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին
5. Աղմուկի մակարդակի տատանումներ	Շինհրապարակում պարբերաբար	Աղմկաչափ	Կապալառու

6. Մարդու առողջություն և անվտանգություն	Շինարարության ընթացքում, պարբերաբար	Շինարարության տարածքում, հարցումների իրականացում, համապատասխան ցուցատախտակների տեղադրում	Կապալառու «ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին
7.Տարածքի բարեկարգում	Շինարարության ավարտից հետո	Տեսողական ուսումնասիրություն	Կապալառու, «ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
Շահագործման փուլ			
1. Կենսաբազմազանության ուսումնասիրություններ՝ տարածքում կենսաբազմազանության հնարավոր փոփոխությունները դիտարկելու նպատակով:	Հինգ տարին մեկ անգամ	Մասնագիտական ուսումնասիրություն	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ
2. Արտակարգ իրավիճակների հսկողություն՝ վթարային իրավիճակների նվազեցման նպատակով	Արևակայանի և Ենթակայանի տարածքում համապատասխան հակահրդեհային միջոցների առկայություն: Անվտանգության համակարգերի սարքյունքների վերահսկում:	Ստուգումներ Մշտական մոնիթորիզ՝ աշխատողների միջոցով:	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին
3. Սոցիալական	Գործունեության իրականացման ընթացքում	Չխաթարել գործունեության տարածքին հարակից՝ գյուղացիներին պատկանող	«ՅՈՒՆԻՔՈ» ՍՊԸ

		տարածքներում գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը: Կանոնավոր սոցիալական պարտավորությունների կատարում՝ ամրագրված համայնքի հետ կնքված պայմանագրում:	
--	--	--	--

15. Հանրային քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի դպրոցի շենքում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանրային քննարկմանը ներկա էին համայնքի, գործունեություն իրականացնող ընկերության ներկայացուցիչները, բնակիչներ: Հանրային քննարկմանը ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային լուծումները և գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումները և հարցադրումները:

Քննարկումների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը կողմ են արտահայտվել արևակայանի կառուցմանը: Հավելված 8:

Քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքը տվել է իր համաձայնությունը:

16. Բողոքների ընթացակարգ

Ընկերությունում կներդրվի բողոքների ուսումնասիրման ընթացակարգ՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացած շեղումների. օդային ավազան արտանետումների, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև գյուղացիների հողագործական աշխատանքներին խոչընդոտելու վերաբերյալ բողոքներին արձագանքելու, շեղումները, դրանց պատճառները բացահայտելու, ժամանակին արձագանքելու և թերությունները վերացնելու նպատակով:

17. Վթարային իրավիճակներ և հնարավոր դադարեցում, փակում.

Ընկերության կողմից գործունեության հնարավոր դադարեցման դեպքում վերջինիս կողմից նախատեսվում են գործողությունների պլան, որը հնարավոր է ներառի.

- ✓ սարքավորումների, արևային պանելների, էլեկտրասյուների ապամոնտաժում,
- ✓ թափոնների կառավարում,
- ✓ արևակայանի, ենթակայանի տարածքների կարգաբերում:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրներում, դեռևս

գոյություն չունի արևային կայանների սարքավորումների, մասնավորապես որպես թափոնատեսակ՝ ֆոտոէլեմենտներ պարունակող պանելների և այլ ուղեկցող մասերի պահպանման, տեղակայման լուծումները:

Քանի որ արևային կայանի պանելները (батаре́йка) պատրաստվում են տարբեր ֆոտոէլեմենտներ պարունակող (ապակի, պլաստիկ) նյութերից, որոնք իրենց մեջ պարունակում են (կապար, քրոմ, կադմիում, սիլիցիում և այլն), ուստի դրանց ուտիլիզացիան և վերամշակումը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության համար հրատապ լուծում պահանջող խնդիր, որի լուծումը պետք է տրվի ՀՀ կառավարության կողմից մշակված համապատասխան օրենսդրության, ծրագրի հիման վրա, հաշվի առնելով առաջավոր զարգացած երկրների փորձը: Հատկապես առանց կադմիումի բարակ թաղանթով արևային մոդուլների ստեղծման աշխատանքներն արդեն հաջողությամբ ընթանում են առաջավոր զարգացած երկրներում:

Մինչև համապատասխան ռազմավարության մշակումը ընկերությունը նախատեսում է կիրառել հետևյալ հնարավոր տարբերակները.

- հնարավորության դեպքում վերանորոգել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,
- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում, բաց վիճակում,
- վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրներին, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,

- ֆոտոէլեմենտներ պարունակող թափոնները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին (նաև արտասահմանյան)՝ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,

- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային վահամակները:

Գործունեության իրականացման ժամանակ հնարավոր վթարների դեպքում Ձեռնարկողի կողմից ապամոնտաժվելու են վնասված սարքավորումները, վահանակները, էլեկտրահաղորդման գծերը: Ենթակայանի տարածքում կապամոնտաժվեն տրանսֆորմատորները, յուղահեռացման համակարգերը և այլ սարքավորումները: Ապամոնտաժված պիտանի սարքավորումները, պանելները կվաճառվեն, իսկ խոտանը(ոչ պիտանի մետաղական մասեր, լարեր և այլն) կտեսակավորվի և կհանձնվի համապատասխան մասնագիտական կազմակերպություններին: Բետոնյա մնացորդները կհանձնվեն ճանապարհաշինարարական ընկերություններին: Տարածքը կբարեկարգվի, կբերվի նախկին տեսքի:

18. Նախատեսվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներում Արևային Էներգիան օգտագործվելու է տնտեսության տարբեր բնագավառներում՝ ջեռուցման, լուսավորության, տաք ջրի, ավտոտրանսպորտի, վառելիքի արտադրության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: Արևային և քամու վերականգնվող էներգիան այսօր աշխարհում էլեկտրաէներգիայի ամենաարագ աճող աղբյուրներն են և տեխնոլոգիապես ավելի առաջադեմ, տնտեսապես մատչելի են: Սա պայմանավորված է մի շարք դրական գործոններով, ինչպիսիք են վառելիքի ծախսերի, ջերմոցային գազերի և այլ աղտոտող թափոնների արտանետումների կրճատումը: 2011 թվականին Էներգետիկայի միջազգային գործակալության զեկույցում նշվել է, որ արևային էներգիայի տեխնոլոգիաները, ինչպիսիք են ֆոտոգալվաները, արևային տաք ջուրը և կենտրոնացված արևային էներգիան, կարող են ապահովել աշխարհի էներգիայի մեկ երրորդը մինչև 2060 թվականը, սահմանափակել կլիմայի փոփոխությունը և անցնել վերականգնվող էներգիայի: Արեգակից ստացված էներգիան կարող է առանցքային դեր ունենալ համաշխարհային տնտեսությունը ապաածխաթթվայնացնելու գործընթացում և էներգախնայողության բարելավման ոլորտում:

Համաձայն Էներգետիկ Ember վերլուծական կենտրոնի զեկույցի՝ 2022 թվականին քամու և արևի արտադրության աճը ծածկել է էլեկտրաէներգիայի համաշխարհային պահանջարկի աճի 80%-ը: Քամին և արևը 2022 թվականին հասել են համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության ռեկորդային 12%-ի՝ մեկ տարի առաջվա 10%-ի դիմաց:

Հայաստանում ջերմոցային գազերի արտանետման ամենամեծ մասնաբաժինը Էներգետիկայի ոլորտինն է, որը CO₂-ի ընդհանուր արտանետումների մեջ կազմում է 64%: ՀՀ-ում 1 կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրության համար առաջանում է մոտավորապես 0.4 կգ ածխածնի երկօքսիդ: Երբ տեղադրում ենք արևային կայաններ կամ իրականացնում ենք ջերմամեկուսացման աշխատանքներ, կանխում ենք ածխածնի երկօքսիդի արտանետումը մթնոլորտ: Վերականգնվող էներգետիկայի զարգացումը կարևորվում է ոչ միայն էներգետիկայի ոլորտի դիվերսիֆիկացիայի, այլ նաև ջերմոցային գազերի արտանետումների նվազման տեսանկյունից: Էներգիայի օգտագործումը կնպաստի Հայաստանի հանրապետության էներգետիկ անվտանգության ավելացմանը, ապավինելով բնածին, անսպառ և հիմնականում ներմուծումից անկախ ռեսուրսին, կբարձրացնի էներգետիկ համակարգի կայունությունը, կախվածությունը ածխաջրածինների պաշարներով հարուստ վառելիքից, կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտումը: ՀՀ կառավարությունը խթանում է արևային և այլ այլընտրանքային կայանների կառուցման և հետագա զարգացման ներդրումային ծրագրերը՝ հատկապես չգազիֆիկացված համայանքներում: Արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար, հատկապես այն դեպքում երբ հանրապետությունը հարուստ է արևային էներգիայի գոտիներով/ Globalsolaratlas.info/: 2023թ. հոկտեմբերի 26-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. հունվարի 14-ի X 48-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ վերականգնվող էներգետիկայի հզորությունը մինչև 2040թ.-ը կհասցվի 2000 ՄՎտ-ի, որից 1500 ՄՎտ-ն արևային, իսկ 500 ՄՎտ-ն հողմային էներգետիկայի հաշվին:

«Յունիքո» ՍՊ ընկերության կողմից կառուցվող արևակայանը համահունչ է ՀՀ կառավարության

2022 թվականի մարտի 24-ի «ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼԻ (2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐ) ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 398-Լ որոշման պահանջներին:

Հաշվետվությունում ներառված՝ ԲՄԿՊ-ում և մոնիթորինգի պլանում առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումների իրականացվելու դեպքում «Յունիքո» ՍՊԸ-ի արևային էլեկտրակայանը կարող է կառուցվել և շահագործվել առանց շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա զգալի բացասական ազդեցության: Այս միջոցառումները միտված են կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականության բարձրացմանը:

Գրականություն

1. Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր:
- 2.«Աղմուկն աշխատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարակն նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամաններ:
- 3.Էներգետիկայի միջազգային գործակալությունը (IEA): Էներգախնայողության ցուցանիշներ. Քաղաքականության շրջանակ, Էդ. IEA, 2014 թ.:
- 4.Մ.Վ. Գոլիցին, Ա.Մ. Գոլիցին, Ն.Վ. Պրոնինա: «Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ» Էդ. Գիտություն, Մոսկվա, 2004:
- 5.Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ:
- 6.ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
- 7.ՀՀ կառավարության 2020թ.հուլիսի 2-ի նիստի N87 արձանագրություն:
- 8.ՇՊ.485.13130.2021:
9. ՀՀՇՆ 22.01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»
- 10.Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
- 11.ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք /<https://armstat.am/>:
- 12.[https:// www.bagramyan.am/Pages/CustomPage/](https://www.bagramyan.am/Pages/CustomPage/):

Հավելված 1.

Տարածքի սեփականության իրավունքի վկայականը, Պետ Ռեգիստրի վկայականը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 3 հունիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՅՈՒՆԻԲՈ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան գյուղ Լեռնագոգ Պ. Սևակի փողոց 114 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր 08.11.2023թ ս/մ 14026, Համայնքի ավագանու 24.05.2024թ. հ. 56-Ա որոշում, Հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիր թիվ 73, 27.05.2024թ., Ճարտարապետահատակագծային առաջադրանք հ. 045 27.05.2024թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-045-0116-0014

Մակերեսի չափը (հա)՝ 5.0012

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 03062024-04-0035, գաղտնաբառ՝ QTV5C9IWFYAY

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱԼԵՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 03062024-04-0035, գաղտնաբառ՝ QTV5C9IWFYAY

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքի միջոցով

Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՒԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2024-07-09

«ՅՈՒՆԻՔՈ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 290.110.1278110

Հիմնադրման տարի 2022

Գրանցման ամսաթիվ 2022-11-22

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 53655320

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 01330947

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովարդի ծածկագիր) 48118110

Էլ. փոստ info@afprogress.com

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԱՂԱԲԱՐՅԱՆ Փ. / 11/6 տ. ԴԱՎԹԱՇԵՆ 0045 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս +374 94 03-18-66

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն ՌԱԶՄԻԿ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԻ

Ստորագրային տվյալներ AT0558862 2020-09-16 001

Հասցե ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ Պ. / 135Դ 2. / 32 ք. ՇԵՆԳԱՎԻԹ 0061 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ



Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը << դրամով՝ 3,000.00

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը << դրամով
ՈԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԻ Անձնագիր հ/հ AT0558862 2020-09-16 տրվ. 001 ի կողմից ՀԾՀ 3614850560 Հասցե՝ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ Պ. / 135 ^Դ շ. / 32 քն. ՇԵՆԳԱԿԻԹ 0061 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2023-10-27	62 %	1860
